Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՄԵԾ ՀԱՅԱԳԵՏՆ ՈՒ ԳՐՈՂԸ

Հանրապետության գրախանութներում արդեն վաճառքի է դուրս բերվել հայ գեղարվեստական գրականության և հայագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի չափածո և արձակ ստեղծագործությունների ժողովածուն, «Երկեր» ընդհանուր խորագրով։ Այն հրատարակվել է «Հայ դասականների գրադարան» մատենաշարով և հանդիսանում է այդ մատենաշարի վերջին՝ 14-րդ հատորը։

Օգտվելով առիթից՝ «Գրքերի աշխարհի» խմբագրությունը դիմեց Ալիշանի վերոհիշյալ «Երկերը» հրատարակության պատրաստողին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, Հայկական հանրապետության Պետական մրցանակի դափնեկիր ընկ. Սուրեն Շտիկյանին և խնդրեց նրան թերթի ընթերցողներին ներկայացնել «Բոլորիս պաշտելի Նահապետի» (Ավ. Իսահակյան)՝ իր կազմած հատորը։ Ահա թե ինչ ասաց նա։

Հրատարակման առումով Ղևոնդ Ալիշանի գործերը կարելի է բաժանել երկու՝ խիստ անհավասար խմբերի։ Առաջինի և մեծաքանակի մեջ մտնում են նրա այն աշխատությունները, ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք հրատարակվել կամ վերահրատարակվել են իր կենդանության օրոք և հետևաբար լույս աշխարհ են եկել նրա «ջանյուք և սատարմամբ»։ Ալիշանի գրչի արգասիք հանդիսացող մյուս, ավելի փոքր խումբը (Չմոռանանք, որ «փոքր» և «մեծ» հասկացողություններն այստեղ օգտագործվում են Նահապետի վիթխարի ժառանգության տեսանկյունից) հրատարակվել է Մխիթարյան միաբանության պարբերականի՝ «Բազմավեպի» տարբեր տարիների մեկ կամ մի քանի համարներում և այդպես էլ մնացել է այնտեղ։ Ինչ-ինչ պատճառներով դրանք ոչ ոք չի հավաքել ու հրատարակել։ Այդ գործով չի զբաղվել նաև Ալիշանը, թեև մի քանի անգամ խոստովանել է, որ դա մշտապես եղել է նրա «հոգերու կետ նպատակը»։ Այս բնույթի նյութերն են, ահա, որ հավաքվել ու զետեղվել են ներկա հատորում և, ամսագրի համար գրված լինելու հետևանքով որոշ «թերթոնային» ձև ունենալով հանդերձ, ոչնչով չեն զիջում Ալիշանի

մյուս՝ առանձին գրքով հրատարակված աշխատություններին։ Դրանց ժամանակագրական սահմանները ավելի ճիշտ պատկերացնելու համար ավելացնենք, որ ժողովածվում զետեղված՝ ժամանակի իմաստով «ամենահին» ուսումնասիրությունը՝ «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» խորագրով, «Բազմավեպում» սկսել է հրատարակվել 1845 թվականից, իսկ «ամենանորը»՝ «Երրյակ Ներսիսյանք» ծավալուն «Քննաբանականն» է, որը տպագրվել է նույն «Բազմավեպի» 1900 թվականի հավելվածային համարում։ Ժամանակային այս տարածքում գրված գործերն են, ահա, որոնք, ինչպես արդեն ասացինք, ոչ մի անգամ վերահրատարակվելու բախտին չեն արժանացել և այսօր, առանձին հատորում զետեղված, իրենց համապատասխան ծանոթագրություններով հանձնվում են հայ ընթերցող և գիտական հասարակայնության անկողմնակալ դատին։

Ինչ գիտական-հասարակական արժեք են ներկայացնում այդ գործերը։

Նախ նշենք, որ դրանք ամենատարբեր նպատակաուղղվածությունն ունեն և անդրադառնում են մեր գրական, հայագիտական, հասարակական կյանքի ամենաբազմապիսի բնագավառներին։ Այստեղ են «Թե ով է տղոց ամենեն սիրելի, զորավոր և հարկավոր վարպետը», «Ամենահարկավոր ուսմունք», «Ազգային դաստիարակություն» և այլ հոդվածները, որտեղ Ալիշանն անդրադառնում է «հայ մանկտի»-ների դաստիարակության հարցերին և բնութագրվում որպես բանիմաց մանկավարժ։ «Շատոբրիան», «Շիլլեր» և նմանատիպ այլ հոդված-դիմանկարներում մասնագիտական հմտությամբ բնութագրված են հիշյալ դասականների ստեղծագործությունները։ «Ամսոց բնական նշանները» խորագրի ներքո զետեղված տասներկու մանրապատումներում, որոնք ավելի շուտ գողտրիկ նովելներ են հիշեցնում, հեղինակը աշխույժ ու զվարթ ոճով պատմում է փոքրիկ բարեկամ Գրիգորիկին տվյալ ամսվան բնորոշ առանձնահատկությունները, բացատրում «պարտիզպանին, այգեգործին ընելիքները»։ «Մովսես Խորենացի և իր հայոց պատմությունը», «Հովհաննես Սարկավագ վարդապետ», «Մովսես Քերթողահայր հայոց», «Նշմարք և նշխարք ի Հայաստան աշխարհի» ուսումնասիրությունները մի անգամ ևս գալիս են հավաստելու Ղևոնդ Ալիշանին, որպես խորագիտակ հայագետի և բանասերի։ Եվ վերջապես,

«Հրահանգ, զբոսանք և սփոփանք հասարակաց», «Եղևնու ներքո» և նմանատիպ այլ աշխատություն-տրակտատները բացահայտում են Ալիշանի տեսական-փիլիսոփայական նկատառումները իրենց բոլոր դրսևորումներում և այլն։ Այս իմաստով Ալիշանի՝ ընթերցողներին ներկայացվող սույն ժողովածուն, մի անգամ ևս գալիս է հաստատելու, որ հանձինս Նահապետի մենք գործ ունենք գիտական ու գեղարվեստական ամենալայն ընդգրկումներ ունեցող և այդ բոլոր բնագավառներում իր ինքնուրույն դատողություններն ու ասելիքներն արտահայտող մի այնպիսի վիթխարի անհատականության հետ, որը բացառիկ երևույթ է մեր ժողովրդի հոգևոր կյանքում։ Իսկ հատորում զետեղված գործերի գիտական արժեքի մասին գաղափար տալու համար բերենք միայն մեկ օրինակ։

Հետևելով եվրոպական կլասիցիստներին, հայ գրականության այդ ուղղության ներկայացուցիչները ևս զարգացնում էին այն տեսակետը, որ ազգային, ժողովրդական երգերը, լինելով «ցածր» մարդկանց մտածողության դրսևորման ձև, չեն կարող որևէ ուշագրավ նյութ պարունակել իրենց մեջ, առավել ևս չեն կարող լրջմիտ քննության և գիտական խորակրկիտ ուսումնասիրության նյութ դառնալ։ «Ռամկորեն» արհամարհական բառով էր պիտակավորված հայկական ժողովրդական բառ ու բանը և նրանց անդրադառնալը՝ անիմաստ ու անկարևոր աշխատանք։

Ալիշանը եկավ հակադրվելու իշխող այս մտայնությանը և աներկյուղ համարձակությամբ դիմեց հայ հանրությանը, պահանջելով ու հորդորելով, հիմնավորապես զբաղվել ազգային երգերի հավաքմամբ և ուսումնասիրությամբ։ «Փափագելի բան է, – գրում էր նա «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» հոդվածում, – որ մեր ազգայինք ալ վառվեին ազգային ավանդություններով ու ձեռքերնին եկածին չափ ջանային հավաքել այնպիսի երգեր, պատմություններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդեին»։ Շուտով Ալիշանը կատարում է նաև նրանց գիտական արժեքավորումը և դարձյալ հակադրվելով իր նախորդներին, գրում է՝ «Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացընեն ազգին հանճարը քան թե ծանր գրվածքներ և կգտնվին անոնց մեջ անանկ սքանչելի զուրցուածք ... որ գերագույն գրվածոց կարգը անցնելու են»։ Եվ վստահորեն կարելի է ասել, որ Ալիշանի շնորհիվ գիտականորեն

իմաստավորվեց ու իր հասարակական-գեղագիտական ճանաչումն ստացավ ինքնուրույն մի դիսցիպլին՝ հայ ժողովրդական բանահյուսությունը, իսկ ինքը՝ Ալիշանը, եղավ դրա հիմնադիրներից մեկը։ Համանման օրինակներ հատորում զետեղված նյութերից կարելի է էլի բերել։

Վերջացնելով, հարկ եմ համարում անպայման նշել Ալիշանի «Երկերի» ժողովածվի խմբագրի՝ Ռիմա Մուրադյանի ջանասեր ու հոգատար աշխատանքը և շնորհակալություն հայտնել նրան։

Գրքերի աշխարհ, 1981, № 6, հունիսի 15